ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 349 - Ա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի տնօրինության 8 708 333 ՀՀ դրամ սկզբնական և 0 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով TOYOTA CAMRY 2.4 (2008 թվականի արտադրություն, նույնացման համար՝ JTNBE40K803155506) տրանսպորտային միջոցը հետ վերցնել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմից և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի հետ համատեղ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային

միջոցի հանձնման-ընդունման աշխատանքները՝ գրանցման և հաշվառման ծախսերը իրականացնելով Արարատի մարզպետի աշխատակազմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ